

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար  
 սարեկան 12 ֆր.  
 վեցամսայ 6  
 Արսասահմանի  
 համար սարեկան 15  
 վեցամսայ 8  
 Անկերիկայի համար  
 սարեկան 3 սյր.  
 վեցամսայ 1 50

Մանուգրան տղր սուս  
 ին Երեսին համար 40 ս.  
 իսկ վերջին երեսին հա-  
 մար 20 սակրիս է. երե-  
 ին մեկի ակզաներու  
 համար 20 0/0 զեղջ կրչ-  
 րայ:

Վառույթի համար  
 ձեռք 40 սակրիս

# ՇԱՐՄՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկի  
 խմբագրութեան հաս-  
 ցիին

Редакция на вѣстники  
 „Шаржумъ“  
 Варна

Redaction du journal  
 „Charjoum“  
 Yarna (Bulgarie)

Պուշկարիոյ համար  
 ձեռք 15 ՍԱՆԻՄ

Արսասահմանի համար  
 ձեռք 20 ՍԱՆԻՄ

Գրութիւնք եւ չեւ  
 սրտիք

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԻ ԵՒ ԵԱԲԱԹՈՐԵՐԸ

«ՇԱՐՄՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆՈՐԸ ՊԵՏՐ Է ԿԱՆԵՐԿ ՎՃԱՐԷ»

## ԱՄԲՈՒԻ ԿԱՐՏԻՔԻ

Կեանքի կեղծիքին խորթ, անըն-  
 գունակ,  
 Հալածեալ կեանքովս մինչ կապ-  
 րէի ես՝  
 Սիրտս խոցուած, լքած ու մի-  
 նակ,  
 «Օ՛, հպարտ է նա» ըսին ետե-  
 ւէս...

Կեանքի պերճանքէն փոքր մի փը-  
 րանք  
 Մուրալու համար չի խոնարհելս՝  
 նեղացան մարդիկ, ու իբր լու-  
 տանք  
 «Հպարտ» անունը թքին ետեւէս...

Սի՛րտ մը կրեցի, սիրտ մը մարդ-  
 կային,  
 Իր արժանիքին գիտակցութեամբ  
 վէ՛ս,  
 Օ՛, ոճի՛ր մ'էր այդ «մեծներու  
 աչքին»  
 «Հպարտ մըն է նա» ըսին ետե-  
 ւէս...

Զգիտացայ չոյել, փայփայել, գրգ-  
 ւել,  
 Մարդկային ստոր կրքերը պէս-  
 պէս,  
 Երթունքներս ըսին միտքս անար-  
 գել՝  
 «Հպարտին մէկն է» ըսին ետե-  
 ւէս...

Ու մինչ վշտարեկ, սգաւոր, մի-  
 նակ,  
 Սիրտս խորտակեա՛մ. այրի՛ յոյ-  
 սիրէս,  
 Կապրէի քաշեա՛մ՝ որբի մ'հանգու-  
 նակ՝  
 «Օ՛, հպարտ մ'է նա» ըսին ետե-  
 ւէս...

Այո՛, հպարտ մ'եմ ձգտումներովս՝  
 երկնի պէս անհուն, մաքրութեամ-  
 բըն անոր,  
 Օ՛, հպարտացայ զգացումներովս  
 Ովկէանին պէս լայն, ու անոր  
 չափ խոր...

Գոռոզ կուռքերու պատանդանին  
 տակ  
 Ժահրոտ ճահիճներ ընդհամարե-  
 ցի...  
 Փջուն բառերու խորը՝ անյատակ,  
 Գարշահոտ անդու՛նդ մը մերկա-  
 ցուցի...

Ու հպարտ մ'եղայ փոքրութեանս  
 մէջ՝  
 Վե՛հ գտնելով զիս պաշտած կուռ-

բերէս,  
 Մինչ սիրտ ամբողջ քէնով մը ան-  
 շէջ,  
 «Հպարտ» կը գոռար դեռ իմ ետե-  
 ւէս...  
 Հրանճ  
 Բարիկ

## ԲԱՅ ՆԱՄԱԿՆԵՐ

Դաշնակցական Ընկերներին

I  
 Ընկերներ, ձեզ եմ գիժում  
 այս բաց նամակներով, որպէս զի  
 ամենքդ էլ միահամուռ ուժով  
 աշխատէք հայ պատառութեան  
 գործը գուրս բերել այն վտան-  
 գաւոր կացութիւնից, որի մէջ  
 նա գտնվում է այսօր. շնորհիւ  
 մեր վերջին շարժումների անյա-  
 շող հետեւանքների, Եւրոպայի  
 անտարբերութեան ու այլեւայլ  
 պատճառների...

Այո, կացութիւնը շատ վտան-  
 գաւոր է, բայց ոչ յուսահատա-  
 կան. սակայն եթէ մենք ժամա-  
 նակին պէտք եղած միջոցները  
 ձեռք չառնենք, նա կարող է լի-  
 նել յուսահատական ու կորուս-  
 տաբեր:

Այսօր Սասունի կուռ ոտորի  
 քաջ մասը կամ բանտարկված է  
 կամ սպանված. Սասունցիին ինքը  
 մերկ, անօթի և անտուն է. Եւ-  
 րոպան մեր հայասէր բալեկամ-  
 ներովը միասին, ոչ միայն չը կա-  
 ռողացաւ թուրք կառավարու-  
 թիւնից ստացած խոստումները  
 կատարել տալ, այլև չը կարո-  
 զացաւ ամիսներ առաջ հաւաք-  
 ված 35 հազար ֆրանկը հասցնել  
 կարօտ Սասունցիներին: Տարօնը  
 նոյն այդ շարժումների հետե-  
 ւանքով դարձաւ դժոխք. ստեղծ-  
 վեց մի անտանելի կացութիւն,  
 ոչնչացան մեր կուռզ գիժագրող  
 ուժերը, ոչնչացան մեր զէնքերը  
 այդ կողմերում: Այն ուժը, ինչ որ  
 ունէինք այդ կողմերում՝ մի տա-  
 րի առաջ, արդիւնք երկար տա-  
 րիների աննկուն և տանջանքնե-

րով լի աշխատանքի, կրկին ըս-  
 տեղծելու համար տարիներ և  
 Հրայրի ու Վահանի պէս մարդիկ  
 պէտք են, որոնք ի հարկէ դիւ-  
 րութեամբ չեն ստեղծվում:

Նոյն այդ շարժումների հետե-  
 ւանքով, այսօր Վապուրականում  
 էլ դժոխային կացութիւն է տի-  
 ռում և յեղափոխական տարրերը  
 պարտաւորված են շատ դանդաղ  
 գործելու պէս Սասունի և Տա-  
 րօնի վիճակին շարժանանան:

Ի հարկէ այս դառն իրականու-  
 թիւնը պարզելով՝ ես նպատակ  
 չունեմ շարժվող Սասունին կամ  
 նրանում գտնվող գործիչներին  
 մեղադրել. ոչ, քաւ լիցի. նը-  
 րանք այլ կերպ չէին կարող  
 վարվել. քանի որ թուրքը յար-  
 ձակվում էր, պէտք էր որ դի-  
 մադրէին և միայն գիժագրելով  
 ընկճվէին. այլ ուզում եմ ասել  
 որ կացութիւնը փոխված է. ու  
 մեր առջեւը դրած բոլորովին  
 նոր և աւելի բարդ պայմաններ,  
 որոնք մեզ ստիպում են մեր ա-  
 մեն մի քայլը հարիւր անգամ  
 շարժելով առնել. ու ջնջել այն  
 որոշումները, որոնք տրված էին  
 այդ բարդ պայմանները գոյու-  
 թիւն չունենալուց առաջ:

Իացի մեր պատառութեան  
 գործի կորիզը կազմող հայկական  
 գաւառների այդ վտանգաւոր կա-  
 ցութիւնից. Դաշնակցութեան  
 առջեւ գրված է և կովկասահայ  
 ինդիքը: Այդ խնդիրն էլ մի  
 տարվան մէջ հասգին փոփոխու-  
 թեան է ենթարկվել. նախորդ  
 ժողովրդային ինքնագոյութեան  
 պաշտպանումը բնագործի շնոր-  
 հիւ ստեղծված շարժումները այ-  
 սօր բուն յեղափոխական գործի  
 վերածվելով, աւելի կազմակերպ-  
 վել է և աւելի ուժեղ է պահան-  
 ջում: Որ տարի առաջ մենք հա-  
 ցիւ էինք կարողանում կիսատ  
 պաշտ կերպով գոհացում տալ  
 տաճկահայութեան պահանջնե-  
 րին, այսօր պարտաւորվում ենք  
 և կովկասահայութեան յեղափո-  
 խական պահանջներին բաւարա-  
 րութիւն տալ թէ մարդով և թէ  
 զրամով: Ուրեմն անսնում էք թէ

որչափ մեծ և բարդ գործ կայ  
 Դաշնակցութեան առջեւ, ու որ-  
 չափ մեծ պատասխանատուութիւն  
 հայ ցեղի թէ ներկայ և թէ ա-  
 պագայ սերնդի առջեւ: Ու այդ-  
 մեծ, բարդ գործին կանոնաւոր  
 ընթացք և նպաստաւոր հետե-  
 ւանքներ ստանալու ուղղութիւ-  
 նը տալու համար՝ ճիգեր պէտք  
 է թափեն բոլոր Դաշնակցական  
 բանիմաց, յեղափոխական շար-  
 ժումների ելեւէջները բժրանոյ  
 ու փուլերի և պահանջների տար-  
 բերութիւնները գիտակցող գոր-  
 ծիչները:

Վանի Անգլիական հիւպատոսը  
 իր իշխանութեան թելադրու-  
 թիւններին՝ Սասունի շարժումնե-  
 րի առթիւ, հետեւեալ պատաս-  
 խանք տւած է. —

«Սասունի համար նոյն պայ-  
 մանները չէ կարելի առաջարկել  
 թուրք կառավարութեան, ինչ որ  
 Ձէյթունի համար եղաւ. մենք  
 դեռ աեզ չը հասած Սասունը ընկ-  
 ճված էր ու շարժման վարիչնե-  
 րը իրարից անյատկած էին»:

Ահա ուղղակի Եւրոպայի պաշ-  
 տօնական թելադրութիւնը միա-  
 ցած Բրայսի թելադրութեան՝ որ  
 Եւրոպայի միջամտութեան հա-  
 մար պէտք են աւելի երկարատեւ  
 գիժագրութիւններ:

Ի հարկէ այդ թելադրութիւն-  
 ները մեզ համար նորութիւններ  
 չեն: Մենք էլ գիտենք շատ վա-  
 ղուց և միշտ պատրաստվել ենք  
 երկար գիժագրելու ու թուրքը  
 միշտ կանխել է. մենք հանգի-  
 պել ենք անյաջողութիւնների,  
 որոնց պատճառների մէջ ան-  
 շուշտ մենք էլ գոնէ փոքր բա-  
 ժինը ունեցել ենք. այդ ձախող  
 պատճառների մէջ ամենափոք-  
 րիկ բաժանորդ լինելուց իսկ  
 պէտք է խուսափենք: Սխալների  
 կրկնութիւն չը պէտք է տեղի ու-  
 նենան: Սխալները հասկանալու  
 և ճանաչելու ընդունակութեամբ  
 օժտված ու նրանց չը կրկնելու  
 որոշումով զինված է որ մենք  
 պիտի դժենք մեր բարդ ու դժ-  
 ւարին գործի շարունակութեան

նախագիծը, որի մասին կը խոսենք Երկրորդ նամակով և յետագայ համարում :

ՎԱՐԴՍ

ՊԼԻԿԷԻ ՍՊԱՆՈՒՆ  
ՄԱՋՈՆՈՎԻ ՓԱՆԴԻՍՏԸ  
—)o(—

Ճարի իդիօտ կառավարութիւնը հեղ մըն ալ բովանդակ աշխարհին ծաղր ու ծանակը կը դառնայ... Մինչ ասկէ քանի մը օր առաջ մեծագոյն ազմունքներով բովանդակ Ռուսաստանի կառավարութիւնը ցոյցերուն մասին կը խօսուէր. զեկտ. 13ին, Սազոնովի դատավարութեան օրը, անդին, Սազոնով, Ջոնիցերիայի ազատ երկնքին ասկէ ապուշ կառավարութեան քիթն կը խնդար... Եւ դատավարութիւնը, անով ու զողով, կառարուեցաւ, իմեծ զարմացում անոնց, որոնք մեծամեծ անակնկալներ կը յուսային այդ օր Ռուսաստանի յեղափոխական ներու կողմէ, ու Սազոնով դատավարութեան ցմահ բանտարգելութեան, իսկ ընկերը, եթէ գոյութիւն ունէր այդպիսի մէկը. 20 տարուան տաժանակիր աշխատանքի:

Սակայն, ցարկովի գորշափայլար խնկարկունները ինչպիսի էին իրենց ընթացքին մէջ, ի՞նչ ոք լուր մը առաւ դատավարութեան առթիւ եղած հարցերուն կամ պատասխաններուն նկատմամբ, և միակ կէտը, որ առ բունեցաւ ժողովրդին, այդ ալ վճիռն էր:

Իսոյց այսօր, սարորինակ ու անսպասելի երեւոյթով մը, ամենէն զի բնական անգամ սկզբակի ղերութեան մը կը մասնէ, Սազոնով կերպէն միւրիւր, ուր մնացած է և երկու երեք ամիսներէ ի վեր... Անգլիական օրաթերթերէն «Տէլիֆէքսթըս», կձու պահպանողական մը, որ վերջին ուսուցանական պատերազմին առիթով սկսած է սաստիկ հակառուսական խաշակութիւն մը, ու օրական խմբագրականներու նիւթ զարձուցած Ռուսաստանի մէջ տիրակալնորդ ներկայ զգուշելի բեմիւր, այսօր իր մէկ սեփական թղթակցին շատ արտակարգ լուրը կը պատմէ, որուն բովանդակութիւնը պիտի ծանօթացնենք «Շարժում»-ի ընթերցողներուն:

Կարլ Գէորգի Սազոնով, կրտէ, գրիւով զեկտ. 16 թուակիր, Պլէվէի սպանողը, 24 ժամ առաջ, իր բերնով, քանի մը ոռու յեղափոխականներու ներկայութեամբ ըրաւ իր ուճիրին և փախուստին պատմութիւնը:

Սազոնով, լսելով որ Ս. Պետերբուրգի մէջ իր անուշով անձ մը դատաւարութեամբ է ցմահ տաժանակիր աշխատութեան և ուրիշ մը 20 տարուան, իր գործած ոճիրին պատճառաւ այդ անմեղները պատժուելու վտանգէն փրկելու համար, կը ներկայանայ սոյն թղթակցին, որովպէս իր միջոցով յայտնէ հասարակութեան եղելութիւնը և իրողութիւնը երեւան բերելով անմեղները ազատ արձակուիլ, փոխանակ Սիպերիոյ խորքերը զրկուելու:

«Պետելէս առաջ, կըսէ Սազոնով, կուզեմ քու պատուը խօսքդ անուշ, որ 24 ժամ չը պիտի յայտնես ինչ որ քեզի պիտի ըսեմ և ի՞նչ հետագիւր չը պիտի գործածես: Ասի. գոնէ ինձ 24 ժամուան ժամանակ պիտի շնորհէ

Ջոնիցերիայէն փախելու, եթէ հակառակ պարագային կուզես հրաատարել ընթերցանքս»

«Պէտք է բան մը, կըսէ թղթակիրը, մինչև այս րօպէս հետին խօսողին ո՞վ ըլլալը չէի գիտեր: Լոկ բերուած էր ան ինձ վերեւ յիշուած յեղափոխականին կողմէ իբրև մէկը, որ շատ կարեւոր լուր մը ունէր հարցորդու, երկու անմեղներ փրկելու համար անհրաւ վճիռէ մը:

Ոստապայ խնդիրքը կատարելու և կը խօսիմ ու պէտք է խօսիմ, վրայ բերաւ ան, երկու անձեր Սիպերիոյ մէջ կնիդանի թաղուելէն ազատելու յոյսով, ոճիրի մը համար, որը միմիայն ևս գործեցի:

«Ես էի, որ Պլէվէն սպանեցի յուլիս 28ին իդոյնիլովսիկ քրօսէկտին վրայ»

«Գործակից չուէի երբէք, և այն եղելի թշուառականը, որ ձերբակալուած է շինծու պատմութիւնով մը, իբր թէ պիտի նետուի, չեմ ճանչնար — կերպնում ասիկա»

Սոյն խօսքերը կարտայայտուէին սահուն ֆրանսիական մը և զարուած ցատուով. երբ վերջապէս հարցուցի. — Ենչպէս հաւատամ որ խօսածդ ճշմարտութիւն է»:

Ի պատասխան ասոր, մէկ կողմ հրեց մազերը և զլսուի ետեւ անկաւին կարմիր վէրքի նշանը ցոյց տուաւ:

Ապա հանեց բալթոն ու ձեռքը և ըրաւ. — ձեռքդ ալ ուսիս աակը զիր Սոյր վերակապերը տակաւին մէկ երկու ամիս ալ պիտի կրեմ»:

Իրեն ընկերացող անձը զիս վստահեցուց ի՞նչ ան Սազոնովն էր: Ծակա կալին թերահաւատութիւն կարտայայտելի, երբ Ռուսաստանցին պիտոց բարկացուա կերպով. — «Ենչ նպատակ ունիմ քեզ իմ պատմութիւնս ընելով, թէ և ծանր վտանգի կենթարկեմ ինքզինքս, բայց և այնպէս, պէտք է յայտնեմ, երկու անմեղներ ազատելու յոյսով այդ զարհուրելի բաղդէն, եթէ հասարակական կարծիքը արթննայ»:

Ուղղեցի շարունակել պատմութիւնը:

«Միայնակ զուակ մըն եմ, բաւան, հայրս ու մայրս մեռած ըլլալով Պլէվէի անէնդներու կողմէ 1901ին, Մոսկովայէն 4 միտն հեռավորութեան վրայ մեծատարած ագարակի մը վերայ կապուէինք. Հայրս բողոքատար բաւական հարուստ էր: 1901, մարտ 14ին, հայրս մեռած գտնուեցաւ պուրակի մը մէջ, մեր սեփական կալուածներուն վրայ, չորս անգամ կոնակէն և կողէն դաշտնահարուած: Կտակ չը գտնուելով կառավարութիւնը գրաւեց կալուածները»:

Մայրս և ևս գրեթէ անտէր մընացինք, և ան սրտի կսկիծէն մեռաւ միեւնոյն տարուան յուլիսին:

Ապրելու համար նպատակ չուէի աշխուս ևս որոնցի անձնասպան ըլլալ: Սակայն յուսահատութիւնս զայրոյթի փոխուեցաւ, քան մը կար սպրեւու արժանիք — վրէժ:

Թողնցի Մոսկովան և երթալով ուրիշ մեծ քաղաք մը, միայն Ռոյկովոյ Օրգանիզացիան — աէրօրիստներուն:

Պլէվէն սպանողներու դուցակին մէջ չորրորդն էի ևս Առաջինը անյայտացաւ, միւս երկուքը չը յայտնուեցան իսկ ևս յայտնուեցան:

Ինչպէս որ գիտէք, շարունակեց ան. բռնուեցայ ևս այն պարզ պատ-

ճառով որ անդգայ գետին տապալուեցայ: Գիշ աւելի ուշ, ինչքինքս խցիկի մը մէջ գտայ: Երբ ինքզինքս եկայ, կարծես խարազանի մը ազդեցութեան տակն էի:

Բժիշկ մը և չորս օֆիսերներ կային հոն, որոնք իրարու հետ կը խօսէին կամաց ձայնով: Պաշտօնեաներէն մէկը տետրակ մը ձեռքը մտնեցաւ ինձ և անունս հարցուց:

Լուս մնացի, երեք անգամ հարցուց. դարձեալ լուս մնացի, ինձ զարնելու վրայ էր, երբ բժիշկը միջամտեց:

— Ուրազանք տանջանք անոր խօսեցինք կուտայ վարդ, ըսաւ պաշտօնեանն ու ինք Եւ իր պաշտօնակիրները հեռացան: Բժիշկը քանի մը բողբէ ինձ քննելով ան ալ մեկնեցաւ:

Բանտպահ մը եկաւ այնուհետեւ և անունս հարցուց. կրկին մերժեցի խօսել և սկսաւ հագուստիս ամէն մէկ կէտը զննել: Աւրուած տառերով շարկելիս վրայ անունս գրած էր, իսկ թաշկինակիս վրայ միմիայն երկու Վ. Ռ. սկզբնատառեր, որ Մոսկովայէն զննած էի:

Այս միջոցին անհանգիստ չէի, քանի որ վստահելի խոստումներ ունէի ինձ փախցնելու համար: Սակայն անցնելով քանի մը օր ևս նշան մը չը տեսնեցի, յիշուածս հայրս, Բայց վրէժս լուծած էի և կրնայի մեռնիլ Յաճախ կըսուէինք վրաս խարազանի հարեւանքով և մահով, եթէ դեռ ևս մերժէի խախլ. բայց ևս իրենց ըսի թէ «ե՛նչի՛ն ալ կարող է ին ընել: Այսուհանդերձ, բաւական լաւ վարուեցան հետս և ոչ մի հետ յոյսս ալ վերստացայ»:

Գիշեր մը միջնակիսին — այժմ գտած եմ որ օգոստոս Յին էր — պաշտօնեայ մը և բանտպահ մը մտան խոցս, վերջնոյն ձեռքը ծանր կապանքներով, որոնք անցուց ձեռքերուս և ստոքերուս:

Երկու ժամատար և երիտասարդ պաշտօնեայ մը կըսուէին գուրբը, վերջինին սուրբ մերկ:

Հինգն ալ ընկերակցեցան ինձ գոց լանսօ մը որ բանտին դուռը կըսուէր: Ոչ ոք բառ մը արտասանեց, և խորհեցան որ դպրի մահ կառաջնորդուէի: Կառքէն ներս հրուեցայ և երիցագոյն պաշտօնեան, քովս նստելով, խզեց լուծութիւնը, սպառնալով սպանել ինձ, եթէ բառ մը արտասանեմ:

Երկու ոտնաձայնէն գիտէի թէ երկու ժամատարները կը հետեւէին մեզ:

Ի մեծ զարմացում ինձ, թիչ մը վերջը, քանի որ կառքը արագօրէն յատալ կերթար, պաշտօնեային ձեռքը իմնիս մէջ գտայ. — Արիութիւն, բարեկամ, և լուծութիւն...»

Մնացեալը չեմ կրնար ըսել. քանի որ ուրիշներ վտանգի կենթարկէ յոյսս բոլորէն վերջ պարզ կըրեւայ թէ Ռուս հրէշ կառավարութիւնը ինքզինքը անթոթով չը ձգելու համար բովանդակ աշխարհի առաջ, 5 ամիսներէ ի վեր կը տանիլ երկու անմեղներ և հիմա կը լուծուի այն միմիայն հանելուկը, թէ ինչու դատավարութիւնը գոնեփակ եղաւ և՛ ալ աւելին, փոխան կախաղանի, կարծեցալ Սազոնովը. որ օրէնքով ենթակայ էր, լոկ ցմահ տաժանակիր աշխատանքի երթարկուեցաւ:

Անգլիացի թղթակիցը կը յաւելու թէ, Ռուս յեղափոխականը ցուցուցած է իրեն նաեւ շարք մը այնպիսի

տօքլեմաններ, որոնք ամէն կասկած կը փարատեն Սազոնովի խկութեան նկատմամբ: Գրեթէ տառջին անգամը ըլլալով՝ անգլիացի թղթակցի մը ամսուսին 18ին հազարուած լուրը, այն ալ ծիրբիւնէն, այսօր զեկտ. 20ին կը հրատարակուի իբրև զգուշութեան միջոց:

Տեսնեք սոյն հանելուկը ինչ լուծում պիտի տանայ Ռուս կառավարութեան կողմէ:

Դեկտ. 20

Մ. Տոլուպի

ԱՆՆԱՅՍՐ

Ուր գեղե իցե  
անդ ժողովեցին անգլի  
(Շար. Ասխորդ թիւն և Վեր)

Կազակերպութիւնը սրանչեւ, ուսուցիչները անունան, կը մնայ միայն վճիւր, այն ալ, եթէ չըլլայ. այնչէր բնակող էգնաբանը ու Ջուլիկ աղան (սխալեցայ թաղական Ջուլիկ Ջորայեան) կուտան:

Մարտի 2-ը, սիտանց մաղթե՛նք, որ այդ չբաշխարհիկ համալսարանը հիմնուի որ բոլորը իրենց Վոլոսին հասնին:

4

Բարիգի սրբերը արդէն Պարիզէն նամակներ գրել սկսած են. անք շահարկողի ունեւորչը, Պ. Կարպիս (Կարպիս Կարպիս), մեզի իր հաշտոյն սպասուածքեցուց՝ մեր բարեբար էգնաբանին զէժ, ու պատճառ դարձաւ մեր գծադատութեան մեզի՛ Անտուան սիրուն, զարմալ Բարից փոխադրուած մը խորհրդէ՛ք: — Այս կարկի գաւազանը սողորով կողբան խորհրդը այսօրուան իրենց բաղդին վրայ, երբ այնինչ Բասմալեաններու, Մեծատարեաններու և ուրիշներու առաջնորդութեամբ, դատարաններու մէջ ազատուիլ կուզէին շահագործող անգլիացի Արմանիկ էգնաբանի ձեռքէն:

Ինչ ընէր խոզ ու բարի, անհող Աորհն բարիք Ե. Վոսալպուհ քահանայ այս որբերու խնդրին մէջ: Մէկ կողմէն կը վազէր էգնաբանի մօտ, կը խնդրէր որ աղքատ աշխատանքի ծամերը քիչցնէ, միւս կողմէն կը վազէր և պատմամբ որբերու մօտ և խաղաղութեան կը յորդորէր զանոնք, Շարժումի մէջ կը յորդորէր զանոնք, Շարժումի մէջ կը յորդորէր որ որբերու սրշուողը անբաւական է եղած, այդ սուր մըն է, Երեւանի սուտ մըն է: Որբերու սնունդը բաւական էր և նոյնիսկ առատ: Այս հաստատուք երբ կընեմ թող չկարծուի որ, օրի մէջ է ըրածս, այլ ակնառանկներու որբերու բարեկամ, անկեղծ բարեկամներու վկայութեամբ:

Կարպիս Բասմալեանի և իր հըմաններու զոհերն են այսօր որբերը և ո՛չ Տ. Վոսալպուհ քահանայի, որուն ւժիռը խուզելէ առաջ, պէտք է կտրել այդ խօսքը գրի առնողին ձեռքը: Երանի թէ մեր բոլոր քահանաները Բասմալպուհ հօր անաղինութիւնները, հեղաճարտք բնաւորութիւնը ունենային: Մէկ ձեռքով կը բաժանէ իր ստացած համեստ վաճաքը ու միւս ձեռքով կը սրբէ արցունքը կարօտեալին, որուն չկրնար օգնել:

Բայց ևս պիտի անցնեն ամիջապէս ամենէն է՛նչպէս կէտնաբար ինձի

համար մութ կր մնայ, և կը մնայ մութ ամբողջ Եւրոպայի բնակչոցը...

Իզնաբանէն սմեն բան կարելի է սպասել, անտարակոյս ու այդ հիման վրայ ալ...

Բանի որ Եւրոպայի «Հրայր» ստորագրող այնքան բազմաթիւ կը լինի...

կազմութեան հասած է Էզնաբանի մասնութեան անթիւ...

Պէտք էր, եթէ այդքան ճշմարտ էին իր համոզումները, «Հրայր» կազմէր...

Միթէ՞ Պ. Հրայր այնքան պարզափայլ է որ մտածէր թէ իր ենթադրութիւններով...

Չորսուն է՝ բոլոր մասին ալ զեռ գրելիքներ ունինք...

Բարեբախտ հայ գաղութը ճանիճ մըն է, որուն բարոյական կեանքն է...

Մաքրագործութիւնը օրերը պիտի գան անտարակոյս, ուր Պ. Հրայրի խորհուրդը...

Պ. ԳՈՒՐԴԵՆՆԱՆ Փարիզ

արտայայտելով գանկութիւնը մարդկանց զարմանքն իր կանայքի մարմնի չափազանց զարգացումով...

Ինչիւմիցի շրջակայ կայսրաններու Հայ գաղթականութեան

Հայութեան փառքն ու պարծանքն եղող Սասունը սյուսօր կը տառապի նիւթական նեղութիւններով...

Ա. ԱՄՅԻՏԵԱՏԻՈՒԹՅԱՆ ՎԻԿՏՐԻԱ ՊԵՂՈՎԱՆ (Տօնախմբութիւն) Գրագիտի յիշողութեան համար...

ու մազերը մէջտեղից կիսած սանտրած, կնոջ հաստ եւ թարմ զէմքը գեղեցիկ գծեր ունէր...

Պատկերը հեռուից ինձ երեւած մի երբեքստարդ եւ ազդող տիկին, սակայն մտիկից անհամբիւ եւ քառասուն տարեկանի չափ...

Ընդհանրապէս վերցրած նա ցուցադրական էր, իսկ մանրամասնութեանց մէջ զըզեւիւ էր...

Լուսանկարի վրայ փայլում էր, առնական ազատ ձեռքով գրված հետեւեալ մակագրութիւնը...

Ամենախմտառուն Վիտակաին խենթ ժենկայից, Եւրոպայ տարին եւ թիւը Այլ քեզ բարեհամուրթիւն, մինչեւ խոզայնութեան հասած, ինչպէս ասում են Ուրեմն բարեկամու...

հիններ, ընկերուհիներ են: — Եւրոպայից ծառայողներու նի Վիկտորիա Պելլուշան, — Թէյ չիկայ ձեզ, ասեց Վիկտորիա Պելլուշան հանգիստով սենեակից դուրս եկած միջոցին...

անձնուրաց չբուսրեհրուսն, ոճ-  
րագործութիւն պիտի բլլար և  
մեղքերու մեծը. Հետեւաբար  
ներկայ գրովս կը գիմեմ Սթրալ-  
ճայի, Կէրմէնլիի, Սթարու-Չա-  
կորայի, Բատնէ-Մահլէի, Գարա-  
փունարի եւն. կայարաններու և  
քաղաքաց հայ գողթականու-  
թեանց ու կը յայտարարեմ որ ի  
նպատ Սասնոյ և Տարօնոյ հայու-  
թեան հանգանակութեան պիտի  
ձեռնարկեմ. և ինչպէս հայ որ-  
բերու, ի նպատ Չէյթունի ու ի  
նպատ Երկրի կոնոլոներուն չը  
խնայեցիք ձեր լուծան, կը հա-  
ւատամ թէ այս ձեռնարկած աչ-  
դօզուտ հանգանակութեանս եւս  
սիրայօժար կը յատնակցիք առա-  
տօրէն տալով ձեր նուէրները,  
առանց խճճանքի խզճի արգար  
պարտք մ'է որ պիտի կատարենք  
հանդէպ մեր դժբաղդ եղբարց:  
Ազատութիւնը թանկ է և աշ-  
խարհք միլիօնաւոր զոհեր տը-  
ւած է անոր համար. այսօրուան  
ազատ ազգեր շատ սուղ գնած են  
զայն. խօսքէ աւելի գործ պէտք  
է. և մենք այս վերջինով ցոյց  
տանք թէ ազատութեան արժա-  
նի ազգ մը ենք, հակառակ այն  
ամէն պատահականութեանց ու  
ձախաղութեանց՝ որոնց ենթակայ  
եղած են միշտ ընկճուած ազգեր,  
չը յուսահատինք բնաւ, զի յու-  
սահատները գերեզմանին մէջ  
են. Հայաստանի ազատութիւնը  
ձեռք բերելու համար կրկնա-  
պատկենք մեր եռանդն և աշխա-  
տութիւնը. առանց ան-  
հիմն առարկութեանց օգնենք  
Սասնոն, օգնենք նաեւ հայ  
յեզափոխութեան, զօրացնենք  
զայն նիւթպէս և բարոյապէս,  
որովհետեւ անով պիտի գտնենք  
մեր փրկութիւնը, և պիտի պահ  
պանենք մեր գոյութիւնը կազմող  
իզու ու եկեղեցին — այսինքն  
Հայութիւնը:

Մեամ աղօթարար ազգիս  
Վաղինակ Ինն.  
8. Դեկտ. 1904  
Իսլիսիս

«Շարժում» ազգօգուտ լրագրոյ  
նատէժտա հայ գերաստնական  
խումբս այս հինգշաբթի երեկոյ  
Պ. Անիոէ պուրժուրի հեղինակու-  
թիւններէն «Մայրական Գորո-  
վըֆ» անուն արտաշարժ և ընտա-  
նեկան թատերախաղը պիտի ներ  
կայացնէ, բարեհաճեցէք Տիար  
խմբագիր ի լուր թատերասիրաց  
հրատարակել ներկայ ազգարա-  
րութիւնս ի քաջալերութիւն հայ  
գերս. խմբիս:

Ի գիմաց հայ գերս. խմբիս  
Վ. Պապուսեան  
14 դեկ. 904  
Աստ

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Սօֆիայի կանանց ընկերու-  
թիւնները որոշած են խնդրագ-  
րով գիմել մեծ պետութեանց,  
որպէս զի անոնք միջամտեն Սե-  
լանիքի մէջ երեք տարուան բան-  
տարկուած Սլավքա Չաքրովս օ-  
րիորդը ազատելու համար:

— Անցեալները զինուորական  
գաղտնիքներ թուրք կառավա-  
րութեան յայտնած բլլալու հա-  
մար Երկրամեջի ծառայողներ  
եղբարք Ալամանօմները 15  
տարուան խիստ բանտարկութեան  
գատապարտուած են Սօֆիայի  
դատարանի կողմէն:

Դատը զանափակ անզի ունե-  
ցած է:

— Վիլհէլմ կայսրը շատ սի-  
րալիկ կը բաղով ընդունած է պու-  
կար կառավարութեան Գերմա-  
նիոյ ներկայացուցիչը՝ մէնէրալ  
Նիքիֆօրօֆ և հաճոյալի կար-  
ծիքներ յայտնած Պուլկարիոյ  
մասին: Վիլհէլմի այդ նոր բա-  
րեկամական, գիրքը հանդէպ  
Պուլկարիոյ տեղական մամուլին  
մէջ զանազան խորհուրդածու-  
թիւններու նիւթ դարձած է:

Պուլկար կառավարութեան մեկ շը-  
չարնրականը՝ ուղղուած պեկուրիւն-  
ներուն:

Էտիրնէի նահանգին մէջ պու-  
կարներու կրած սարսափելի նե-  
ղութիւններու մասին տեղեկու-  
թիւններ ստանալով՝ ներքին  
գործոց նախարար պ. Բաջո Իեթ-  
րով խիստ նոթալով մը պուլկար  
ներկայացուցիչներուն միջոցաւ  
մեծ պետութիւններուն ուշագ-  
րութիւնը հրաւիրած է, յայտա-  
բարելով որ Պուլկարիան իր վը-  
րայէն կը նետէ զալիք դէպքե-  
րուն պատասխանատուութիւնը,  
որոնք անպատճառ տեղի պիտի  
ունենան շնորհիւ Թուրքիոյ բա-  
նած գիրքին:

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

**Թ Ո Ւ Ր Ք Ի Ա**

Մեծ պետութիւնները ամենքն  
ալ միացած, բացի Գերմանիայէն,  
գիմած էին Բարձր. Դրան իրենց  
սպաներուն թիւը Մակեդոնիոյ  
մէջ աւելցնելու համար, թուրք  
կառավարութիւնը պատասխանած  
է որ համաձայն է միայն Ռուս և  
Աւստրիական սպաներու թիւը ա-  
ւելցնելուն:

— Պոլսոյ յիւանագիտական շը-  
ջանակներու մէջ կը խօսուի որ  
Ռուսիոյ արտաքին գործոց նա-  
խարարը Ինթրպուրկի թուրք  
դեսպանին Եւրոպական նոր սպա-  
ներ չընդունելու առթիւ յայտա-  
բարած է որ Թուրքիա կը զլանայ  
իր խոստումները կատարել. եւ-

րոպիոյ համարութիւնը հատնե-  
լու վրայ է ու Թուրքիա կը զըտ-  
նուի վտանգաւոր նախաբերկոյն  
առջեւ, որոնց պատասխանաւը-  
ութիւնը Թուրքիոյ իրեն վրայ  
պիտի ծանրանայ:

— «Նմրանկ. Յայթ» թերթին  
Եկտարուէն կը հաղորդեն հետեւ-  
եալը:

Աւստրիոյ ստիպուածով թուրք  
պաշտօնեաներուն պատժուելը.  
փոստային միջադէպի առթիւ.  
մահմետականները զրգռած և  
վալիին խնդրագիր տուած են Ա-  
ւստրիական հիւպատոսը պաշտօ-  
նազուրկ ընել տալու համար. Ա-  
ւստրիական հիւպատոսը իմանա-  
լով այդ. վալիէն պահանջած է  
խնդրագիր ստորագրողները ձեր-  
բակալել և Եկտարայէն վանել:

**ՌՈՒՍԻԱ**

Յարը հրամայած է որ բոլոր  
զեմստիօներուն պատերուի ի-  
րենց ժողովներուն մէջ վիճաբա-  
նութեան չը ենթարկուին ուժիմի  
փոփոխութեան խնդիրները:

— Մոսկուայի երկրագործական  
ընկերութեանը գեկտեմբեր  
11ի ժողովը շատ փոթորկալից ե-  
ղած է. անդամներէն մին յայ-  
տարարութիւն մը կարգացած է.  
որով հաւանութիւն կը տրուի զե-  
մստիօյի պատերակներուն Բե-  
թերպուրկի մէջ կայացած ժո-  
ղովին որոշումներուն: Հակառակ  
նախագահի բողոքներուն այդ  
յայտարարութիւնը կը կարգաց-  
ուի:

— Մոսկուայի համալսարանի  
բրոֆէսսորական ժողովը համալ-  
սարանական խորհուրդին բողո-  
քէ բուսնողներուն հանդէպ տե-  
ղի ունեցած խստութիւններուն  
առթիւ, Խորհուրդը այդ առթիւ  
բըննու թիւն բացած է:

— Լեհաստանի Բազով քաղա-  
քի մէջ գործաւորներ կարմիր  
գրօշակներով ցոյցեր ըրեր են:  
Ձինւորներ եկեր են խաղաղու-  
թիւնը վերականգնելու համար.  
Յույսարարները գնդապետ մը  
սպաններ են:

—(—)

Ռուս բրոֆէսսորները քարեկոտոգ-  
մանց կողմնակից

Արատաստման հրատարակող  
ուսու «Օստրոօժէնիէ» թերթը  
հետեւեալը կը հաղորդէ:

Հոկտեմբեր 31ին Քիէֆի ճար-  
տարարութեան թիւը քարեկոտոգ  
րոցին ուսանողները ժողով մը  
կուներան: Դպրոցին վերատե-  
սուչը այդ մասին կը տեղեկագրէ  
նախարարութեան և հրահանք  
կատանայ բրոֆէսսորները ժողովի  
հրաւիրել այդ խնդիրը քննելու  
և որոշելու համար թէ ուսանող-  
ներուն հետ ինչպէս պէտք է  
վարուիլ և աւհասարակ շխատիլ  
ուսանողական յուլումներու առ-

ջելու առնել:  
Բրոֆէսսորական ժողովը խոս-  
տիւթիւններուն պատճառը հա-  
մարելով ուսու ներկայ ուժիմը իր  
որոշումներով կը ձայնակցի զե-  
մստիօներուն պատգամաւորական  
ժողովին որոշումներուն:

**ՌՈՒՍ — ՃԱՐՈՆԱԿԱՆ  
Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ**

Միկատուն առանցին հրովար-  
տակով մը շնորհակալութիւն  
յայտնած է ամբրալ Թօքոյին Բ.  
Արթուրի քով ցոյց տուած գո-  
քալութիւններու համար:

— Ամբրալ կամիմուրա նաւա-  
բաժինով մը մեկնած է գէպի  
հարաւ Բալթիկեան նաւատորմի  
զը գիմաւորելու նպատակով:

— Եւլու գետը ստուած է և ճա-  
րոնացիները թեթեւ գնացքնե-  
րու համար երկաթուղիներու գիծ  
կանցնեն:

— Դեկտեմբեր 13ին կը հեռա-  
գրեն որ ճարոնացիները գրա-  
ւած են Թալիւսչիւնը ու կը տի-  
րապետեն Բօրթ-Արթուրին առ-  
ջելի բոլոր ամբրութիւնները:

— Ռուսական գրաքննութիւ-  
նը շատ խիստ կը վերաբերի Բ.  
Արթուրէն եկած տեղեկութիւն-  
ներուն. Ամբրիկեան թղթակից-  
ներուն արդիւուած է Շանխայի  
վրայով վերադառնալ, պարտա-  
ւորուած են Սիբերիայով անց-  
նիլ:

— Ճարոնացիները կը կարծեն  
որ Ռուսիոյ Եւրոպական զօրքերը  
աւելի թոյլ են Սիպերիական  
զօրքերէն:

— Դեկտեմբեր 12ին Թօքոյին  
կը հեռագրեն որ ճարոնացիները  
նոր բարձրութիւններ գրաւած  
են: Ռուս գերիները կը հաղոր-  
դեն որ սպաննուած են ուսու մե-  
նէրալնի, Կոնտրանտ և Իլման,  
իսկ Պօք վիրաւորուած է:

**ՆԻՄԱԿԻՆՏՈՒՓ**

—(—)

Բարիք.— Գ. Կուրգէնեանի —  
Չեզի և Ն. Ա. Պ. ի մշտական մի-  
օրինակ «Շարժում» սկսեցիք ու-  
ղարկել:

**ՀԱՅՍՍՏԱՆԻ ԲԱՐՏԷՂԸ**

Վառնայի մէջ կը ծախուի  
«Բարիք» թիւնի» ընթերցարանի  
մէջ:

**ՕՏԿՈՎՈՐՆԻԿՆԷ**

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна